# ԶՄԻՒՌՆԻՈՅ ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

## ՔՍԱՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿՆ ԵՒ ԱՆՈՐ ԱՊԱԳԱՅՆ

ՍՏՈՅԳ *աղբերէ կը տեղեկանանք, որ առաջիկայ Յունուարին պիտի տօնուի արժանապէս այդ ազգօգուտ հաստատութեան* 25 *ամեակն, և այժմէն իսկ պէտք եղած պատրաստութիւնք սկսած են տեսնուիլ առ այն: Հեռագիրք, նամակք և նուէրք յղելի են հետեւեալ հասցէին.* Cabinet de lecture arménienne, SMYRNE (Turquie). *Անշուշտ Զմիւռնացւոց հետ ուրիշ հայ հաստատութիւնք իսկ այս առթիւ ձեռք ձեռքի պիտի տան խրախուսելու զայն իրենց նիւթական և բարոյական օգնութիւններով, որպէս զի գտնէ իւր առաջին փայլն և փառքը, որ եղաւ* 1869–1889 *ամաց շրջանին մէջ: Հայ ընթերցատան հիմնադրաց յղացած վսեմ գաղափարին հետ՝ գործին յաջողութիւնն իսկ գեղեցիկ և բեղմնաւոր ապագայ մի կը խոստանայր, եթէ Յ. Բաբազեաններու, Կ. Կոստանեաններու, Գ. Եսայեաններու, Աղաթոններու, Տր. Մարկոսեաններու և Սվազլեաններու յաջորդք նոյն հոգւով և գործունէութեամբ շարունակէին առաջնոց գործը․ Զմիւռնիոյ ազգայինք իրենց նախաձեռնութեամբն բոլոր Թուրքահայոց մէջ միակ պարծելու նիւթ ունէին և ունին տակաւին իրենց դիմաց, եթէ վերստին սկսին գիտական աչօք և յառաջադիմասէր միօք նկատել ԺԹ. դարն, անոր պահանջած և* 20 *ամ յաջողութեամբ վարած գործոյն արդիւնաշատ և ամենամեծ նպատակը: Եւ սակայն օգտակար գործ մի դժուարին ժամանակի՝ մէջ ևս մեծաւ դժուարութեամբ սկսիլ և քիչ տարիէ ետքը անփութութեամբ բարձի թողի առնել՝ ամենէն աւելի մեր ազգին աղետաբեր եղած է միշտ. և եթէ շարունակեն Զմիւռնիացիք այս հաստատութեան հետ ևս նոյնպէս վարուիլ, իրենց մտաւորական զարգացման վառարաններէն մին իրենց ձեռօք շիջուցած պիտի ըլլան:* **Արեւելեան Մամուլ** *բոլոր ջանքերն իսկ անբաւական պիտի ըլլան Կ. Պոլսոյ նախանձընդդէմ կանգնել զայն, իւր գրագէտներովն և հրապարակախօսներով, որոց թիւն, արդէն այսօր իսկ աւելի նուազած՝ քան թէ աճած կը տեսնենք դժբաղդաբար: Եւ ինչպէս պիտի կարենան աճիլ, եթէ դպրոցներէն դուրս՝ հասարակաց գրատուններ և ընթերցատներ առձեռն պատրաստ չըլլան, անոնց հանճարն արծարծելու և շարունակ գիտական և բանասիրական պաշար մատակարարելու նոր սերնդեան: Այո, ինչպէս նիւթական պարէն չունեցող անհատը՝ չ'ապրիր ընդերկար, այսպէս ալ գիտական և մտաւորական միջոցներէ զուրկ եղող հասարակութիւն մի՝ չկարէ զարգանալ և յառաջել: Բնութեան այս խստապահանջ օրինաց յառաջադիմութեան անհրաժեշտ հարկին ներքև, բացին ոչ միայն քաղաքք այլ և գիւղաւանք անգամ Եւրոպիոյ իրենց նորախայծ սերնդոց առջև այնքան ընթերցարաններ, և նուիրեցին այնքան մեծագումար դրամագլուխներ. և նոյն իսկ մեր դրացի Յոյներն՝ ո՛չ ապաքէն մէկէն աւելի նախանձելի օրինակներ կ'ընծայեն մեզ այսօր: Յոբելինի մի նպատակն այն*

digitised by A.R.A.R.@

*չէ միայն, որ անհատի մի կամ քարերար հաստատութեան մի անցեալը վարժատրուի, այլ մանաւանդ անոր ապագայն ապահովուի: Կը յուսանք թէ Զմիւռնիոյ Հայ ընթերցասէն վարչութիւնն խսկ՝ սուելի այս վերջին կէտիս վրայ պիտի դարձնէ իր քաղաքացի և օտարերկրեայ ազգայնոց ուշադրութիւնն, և ամէն միջոց ի գործ պիտի դնէ անոր ապագայն ապահովցնելու. որ կ՚ըլլայ նախ հաստատուն դրամագլուխ մի հայթհայթելով և ապա յայլ և այլ դասակարգութիւններէ բանիբուն վարչութիւն մի կազմակերպելով՝ հասուն գլխոյ մի ներքև, որ լուրջ և միանգամայն ազդեցիկ դեր մի խաղալու բաւականութիւնն ունենայ: Այս ակնկալութեամբ կ՚ողջունենք յիշեալ հաստատութեան 25ամեակն և կը մաղթենք անոր լիովի յաջողութիւն և երջանիկ ապագայ:*

---

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ. — Ստացանք հետեւեալ շահեկան գրեանքը հանդերձ շնորհակալեաց։**

**Ա. — Ռ. Պատկանեանի ԸՆՏԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. խմբագրութեամբ Գր. Խալաթեանի, երկու հատոր. ա. հատոր ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ և բ. հատոր ԱՐՁԱԿ ԳՐՈՒԱԾՆԵՐ. հեղինակին 2 պատկերով, ինքնագրով, կենսագրական նկարագրով և Նոր-Նախիջևանցոց լեզուի համառօտ Բառգրքով. Հրատարակեց Վաղվառէ Քանանեան, յօգուտ Ռ. Պատկանեանի ընտանեաց. Տպ. ի Պետերբուրգ. Տպարան Ց. Լիբերմանի. գինն է Ա և Բ հատորին՝ 4 ռուբլի (կամ 10 ֆռանք). Հրատարակչի հասցէն. Տ. ՎԱՌՎԱՌԷ ՔԱՆԱՆԵԱՆ Մոսկուա, Լազարեան Ճեմարան։**

**Բ. — ՏԱՂՔ ԵՒ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՔ, ՆԱՄԱԿԱՆԻՔ, ԴԱՄԲԱՆԱԿԱՆ, ՏԱՊԱՆԱԳԻՐ Պետրոս Դուրեանի, հաւաքեց Բարսեղ Ե. Էքսէրճեան. Տպ. Կ. Պոլիս. գրատուն Պ. Պալենց, գինն է 15 ղրուշ։**

**Գ. — ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ա. տարի, գրեց Թովմաս Ազնաւեան, Ուսուցիչ Հայ դպրութեանց, Տպ. ի Նոյն, գինն է 3 ղրշ։**

**Դ. — ԾԱՂԿԱՔՈՒՆՔ ՄԱՆԿԱՆՑ կամ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, մասն ա. պատկերազարդ, յօրինեց Սիմոն Ֆէնէրճեան, Տպ. ի Նոյն գինն է 2 ղրշ։**

**Ե. — ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ պատկերազարդ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, ի պէտս. Հայ ուսանողաց, գրեց Դ. Թերզեան, Տպ. ի Նոյն, գինն է 1 ղրշ. 20 փարայ։**

**Զ. — ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ. Տպ. Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէի, գինն է 40 կոպ։**

digitised by A.R.A.R.@